

Քազամարակարարման համակարգում կարգավորվող սակագների հաշվարկման մեթոդիկա

1. Ներածություն

Նայաստանի քազամարակարարման համակարգի գործունեությունը իրականացնում են երկու ընկերություններ՝ «ՆայՌուսգազարդ» ՓԲԸ-ն և «Տրանսգազ» ՍՊԸ-ն: Առաջինը իրականացնում է բնական գազի (այսուհետև՝ գազ) ներկրումը, բաշխումը և մարակարարումը, ինչպես նաև համակարգի կառավարումը, իսկ երկրորդը՝ գազի փոխադրումը հանրապետության սահմանից մինչև բաշխող ընկերություն և ստորգեպնյա պահեստարանների շահագործումը:

Քազամարակարարման համակարգի սակագնային համալիրն ընդգրկում է երկու սակագնային խումբ՝

- ա) համակարգի ներսում գործող ընկերությունների կողմից միմյանց մարուցված ծառայությունների՝ փոխադրման, բաշխման, կարգավարման սակագները,
- բ) գազասպառողներին ծառայությունների մարուցման կարգավորվող սակագները:

Սակագների մշակման գործընթացն իրականացվում է մի շարք փուլերով, որոնցից յուրաքանչյուրը հերապանդում է որոշակի նպատակներ և պահանջում որոշակի հաշվարկներ և այդ հաշվարկների կարարման սկզբունքների (մեթոդիկայի) ընդունում:

Առաջին փուլում հաշվարկվում են համակարգի ընկերությունների տարեկան հասույթների մեծությունները, որոնք բավարար կլինեն նրանց հուսալի, անվրանգ և շարունակական գործունեության համար պահանջվող բոլոր գործառնական ծախսերի կարարման և ներգրավված կապիտալի դիմաց ողջամիտ շահույթ ստանալու համար: Այս հաշվարկներն իրականացնելու համար անհրաժեշտ է ունենալ պահանջվող ծախսերի և շահույթի որոշման հաստատված սկզբունքներ (մեթոդիկա):

Երկրորդ փուլում սպառողների և սպառողական խմբերի համար որոշվում է ծառայությունների մարուցման արժեքը՝ տարբեր գործառույթների ծախսերի դասակարգման և անհրաժեշտ հասույթի տարբեր սպառողական խմբերի միջև բաշխման միջոցով:

Երրորդ փուլում ընտրվում են սակագների կառուցվածքները և հաշվարկվում են

սակագնային դրույքները:

Սակագնային մեթոդաբանության հիմնական խնդիրներն են՝

ա) ապահովել համակարգի ընկերությունների ֆինանսական կայունությունը,

բ) ապահովել ոլորտի նորացման և զարգացման համար ողջամիտ գնով անհրաժեշտ կապիտալի ներգրավումը,

գ) խթանել գազամաքակարարման ծառայությունների անվտանգ և հուսալի մատուցումը ընդունելի և մրցունակ սակագներով,

դ) խթանել սպառողների կողմից գազամաքակարարման ծառայությունների արդյունավետ օգտագործումը:

2. Անհրաժեշտ հասույթի որոշումը

Շարունակական գործունեությունն ապահովելու համար ընկերությունները պետք է հնարավորություն ունենան հատուցելու ծառայությունների մատուցման համար կախարված բոլոր ողջամիտ ծախսերը: Ընդհանուր հասույթը, որն ընկերությանը թույլատրվում է սրանալ սակագների միջոցով, կոչվում է անհրաժեշտ հասույթ կամ ծառայությունների ընդհանուր արժեք:

«ՆայՌուսգազարդ» ՓԲԸ-ի փարեկան անհրաժեշտ հասույթը (ԱՆ) հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{ԱՆ} = \text{ԳԳԱ} + \text{ԳՏԱ} + \text{ՇՊԾ} + \text{Մ} + \text{Ն} + \text{ԹՇ}, \quad (1)$$

որպեսզի՝

ԳԳԱ - գնվող գազի արժեքն է առանց ավելացված արժեքի հարկի (այսուհետև ԱԱՆ),

ԳՏԱ - գազի փոխադրման արժեքն է՝ այն փարեկան գումարը, որը «ՆայՌուսգազարդ» ՓԲԸ-ն վճարում է «Տրանսգազ» ՍՊԸ-ին հանրապետության փարածքում գազի փոխադրման համար,

ՇՊԾ - փարեկան շահագործման և պահպանման ծախսերն են,

Մ - հիմնական միջոցների մաշվածությունը և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիան է:

Ն - ընկերության կողմից վճարվող հարկերը (բացի ԱԱՆ-ից և շահութահարկից), փորքերը և օրենսդրությամբ սահմանված այլ պարտադիր վճարներն են,

ԹՇ - թույլատրելի շահույթն է:

«Տրանսգազ» ՍՊԸ-ի անհրաժեշտ հասույթը որոշվում է նույն բանաձևով՝ առանց գնված

գազի և փոխադրման արժեքի բաղադրիչների:

$$ԱՆ_{\text{փ}} = ՇՊԾ + Ն + ԹՇ \quad (2)$$

Ընկերությունների անհրաժեշտ հասույթը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով վերջին 12 ամսվա փաստացի ծախսերը որոշ ճշգրտումներով, որոնք հաշվի են առնում սակագնային հայտի ներկայացման պահին արդեն հայտնի և նոր սակագնի գործողության ընթացքում ծախսերի և եկամուտների կապարվելիք և ողջամիտ ճշտությամբ չսփվող փոփոխությունները:

2.1 Գնվող գազի արժեք

Գազի գնման համար փարեկան ծախսերը որոշվում են հետևյալ բանաձևով՝

$$Գ ԳԱ = \sum_i C_i V_i ,$$

որտեղ՝ C_i – փարբեր ներմուծողներից և փարբեր ժամկետներում փարվա ընթացքում «ՆայՌուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից գնվող գազի միավորի (1000 խմ) գինն է՝ համաձայն կնքված և սահմանված կարգով Նայաստանի Նանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովում (այսուհետև՝ հանձնաժողով) գրանցված պայմանագրերի,

V_i - փարբեր ներմուծողներից և փարբեր ժամկետներում փարվա ընթացքում «ՆայՌուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից գնվող գազի քանակն է:

Տարվա ընթացքում գնվող գազի ընդհանուր քանակը՝

$$V = \sum_i V_i ,$$

որն անհրաժեշտ է փարեկան սպառումն ապահովելու համար, որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$V = V_{\text{ա}} + \Delta V ,$$

որտեղ՝

$V_{\text{ա}}$ - փարվա ընթացքում սպառողներին առաքվող գազի քանակն է,

ΔV - հանձնաժողովի կողմից հաստատված մեթոդիկայով հաշվարկված՝ փոխադրման և բաշխման ցանցերում գազի կորուստներն ու սեփական կարիքներն են:

2.2 Գազի փոխադրման ծախսեր

Գազի ներկրումը, բաշխումը և իրացումն իրականացնող «ՆայՌուսգազարդ» ՓԲԸ-ն, հանձնաժողովի կողմից սույն մեթոդիկայի համաձայն սահմանված սակագներով, վճարում է

գագի փոխադրումը և պահեստավորումն իրականացնող «Տրանսգագ» ընկերության ծառայությունների դիմաց՝ ապահովելով (2) բանաձևով հաշվարկված այդ ընկերության անհրաժեշտ հասույթը:

2.3 Շահագործման և պահպանման ծախսեր

Շահագործման և պահպանման ծախսերն (ՇՊԾ) ընդգրկում են գազամատակարարման համակարգի ընկերությունների ծախսերի հետևյալ խմբերը՝

- Ø արտադրական անձնակազմի աշխատավարձը, այդ թվում՝ սոցիալական ապահովության հիմնադրամի վճարումները,
- Ø շահագործման համար անհրաժեշտ նյութերի ծախսերը,
- Ø նորոգման ծախսերը, որոնք ընդգրկում են ինչպես այլ կապալառու կազմակերպությունների կողմից, այնպես էլ սեփական ուժերով իրականացվող նորոգման աշխատանքների արժեքը,
- Ø բաժանորդների սպասարկման ծախսերը, որոնք ընդգրկում են հաշվիչների սպասարկման, ցուցմունքները վերցնելու, հաշիվներ ներկայացնելու, ծառայությունների վճարների հաշվառման և հավաքագրման ծախսերը (այս ծախսերը բնորոշ են միայն բաշխման և բաժանորդների սպասարկման գործառնություններ իրականացնող «Նայֆուսգագարդ» ՓԲԸ-ին),
- Ø վարչական և ընդհանուր բնույթի ծախսեր,
- Ø այլ գործառնական ծախսեր, որոնք կարող են ընդգրկել նաև անհուսալի դեբիտորական պարտքերի թույլատրելի չափերը:

ՇՊԾ-ի մեջ չեն մտնում այն ծախսերը, որոնք կապված չեն լիցենզավորված գործունեության հետ: Այդ ծախսերի համար ընկերություններում պետք է իրականացվի առանձնացված հաշվառում:

Լիցենզավորված ընկերությունները պարտավոր են վարել հաշվապահական հաշվառումը՝ հանձնաժողովի կողմից հաստատված հաշվային պլանի և ծախսերի վերագրման կանոնների համաձայն:

Սակագների միջոցով հատուցվում են միայն այն ծախսերը, որոնք հաշվառված են հանձնաժողովի կողմից հաստատված հաշվային պլանին համապատասխան:

Սակագնային հայտ ներկայացնելիս, ընկերությունները պետք է ներկայացնեն նախորդ փարվա աուդիտորի կողմից ստուգված ծախսերը, ընթացիկ փարվա փաստացի (կանխարեսվող) ծախսերը և հաշվարկային փարվա նախարեսվող ծախսերը:

2.4 Թույլատրելի շահույթ

Թույլատրելի է համարվում շահույթի այնպիսի մեծությունը, որը հնարավորություն է տալիս ընկերություններին կապարել ակտիվների ֆինանսավորման համար ներգրավված կապիտալի հետ կապված պարտավորությունները, և չխոչընդոտել ընկերությունների զարգացման համար անհրաժեշտ լրացուցիչ սեփական կամ փոխառու միջոցների ներգրավմանը:

Թույլատրելի շահույթը հաշվարկվում է որպես շահույթի հաշվարկման բազայի (ՇԲ) և թույլատրելի շահույթի նորմայի (ՇՆ) արտադրյալ՝

$$\text{ԹՇ} = \text{ՇԲ} * \text{ՇՆ}$$

Շահույթի հաշվարկման բազա է հանդիսանում ընկերության գույք ակտիվների արժեքը: Այն հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{ՇԲ} = \text{ՕՕՈՆԱ} - \text{ՍՎՈՆԱ} - \text{ԿՄ} + \text{ՇԿ} ,$$

որտեղ՝

ՕՕՈՆԱ - հանձնաժողովի կողմից լիցենզավորված գործունեություն իրականացնելու համար օգտակար և օգրագործվող ճանաչված ոչ ընթացիկ ակտիվների արժեքն է,

ՍՎՈՆԱ - սպառողների կողմից վճարված և չփոխհատուցված ոչ ընթացիկ ակտիվների արժեքն է (օրինակ՝ հաշվիչների կամ շինարարության արժեքը),

ԿՄ – կուրակված մաշվածությունն է,

ՇԿ – հանձնաժողովի կողմից թույլատրված շրջանառու կապիտալի մեծությունն է:

Շահույթի բազան ժամանակ առ ժամանակ (բայց ոչ հաճախ, քան փարին մեկ անգամ) վերահաշվարկվում է՝ հաշվի առնելով՝

- Ø օգտակար և օգրագործվող ճանաչված ակտիվներում կապարված ներդրումներն առանց սպառողների կողմից վճարված ներդրումների,
- Ø թույլատրված մաշվածությունը,
- Ø շրջանառու կապիտալի թույլատրված փոփոխությունը:

Նաշվի առնելով, որ ներդրումների որոշ մասը կարող է իրականացվել արտարժույթով, վերահաշվարկի ժամանակ պետք է հաշվի առնել նաև դրամի փոխարժեքի փոփոխությունը՝ ապահովելով կարգավորման նպատակով ակտիվների իրական արժեքի պահպանումը:

Շահույթի թույլատրելի նորման սահմանվում է ընկերության կապիտալի միջին կշռված արժեքին հավասար, որն իրենից ներկայացնում է փոխառու և սեփական կապիտալի միջին

արժեքը՝ հաշվարկված կապիտալի կառուցվածքում նրանց բաժնեմասերի կշիռներին համապատասխան:

$$ՇՆ = \frac{\sum_i \Phi U_i * r_i + U U * r_u}{\Phi U + U U}$$

որտեղ՝

ΦU_i -ն և r_i -ն համապատասխանաբար i -րդ փոխառության չնարված մնացորդն է հաշվարկային փարվա սկզբում և նրա սպասարկման արժեքն է (միավորի մասերով)

$U U$ և r_u սեփական կապիտալի արժեքն է հաշվարկային փարվա սկզբում և նրա թույլատրելի (ողջամիտ) շահույթի նորման (մինչև հարկումը):

2.5 Մաշվածություն

Մաշվածության ծախսերը հաշվարկվում են գծային եղանակով՝ ելնելով օգրակար և օգրագործվող հիմնական միջոցների սկզբնական (ձեռքբերման) արժեքից և օգրակար կյանքի փնտրությունից:

Եթե հիմնական միջոցները օգրագործվում են ցածր օգրագործման գործակցով կամ հզորության (թողունակության) օգրագործման ցածր ժամերի թվով, ապա հանձնաժողովն իրավունք ունի դրանց արժեքների նկատմամբ կիրառել հիմնավորված իջեցնող գործակիցներ:

3. Ծախսերի վերլուծություն

Սակագների մշակման գործընթացի հաջորդ փուլում իրականացվում է ընկերությունների ծախսերի վերլուծությունը ու բաշխումը՝ ըստ լիցենզավորված գործունեությունների, ծախսերի տեսակների և սպառողական խմբերի: Գնագոյացման նպատակներից մեկը այնպիսի սակագների սահմանումն է, որոնք արտացոլում են փարբեր սպառողներին և սպառողական խմբերին մատուցված ծառայությունների համար ընկերության կողմից կատարվող ծախսերը: Ծախսերի վերլուծության միջոցով որոշվում է փարբեր սպառողական խմբերի մասնաբաժինը ընդհանուր ծախսերում և կատարվում դրանց բաշխումը սպառողական խմբերի միջև: Ծախսերի վերլուծությունը բաղկացած է հետևյալ քայլերից՝

- Ø ծախսերի ֆունկցիոնալացում,
- Ø ծախսերի դասակարգում,
- Ø սպառողների դասակարգում,
- Ø բաշխման գործակիցների որոշում,
- Ø ծախսերի բաշխում:

Սպառողների դասակարգման, բաշխման գործակիցների որոշման և ծախսերի բաշխման եղանակները հանձնաժողովի համաձայնեցմանն են ներկայացվում ընկերությունների կողմից:

3.1 Ծախսերի ֆունկցիոնալացում

«ՆայՌուսգազարդ» ՓԲԸ-ն ունի գործունեության երեք ֆունկցիոնալ փիրոյթ՝ գազի ներկրում, բաշխում, համակարգի կարգավարում: «Տրանսգազ» ՍՊԸ-ն գործում է երկու փիրոյթում՝ փոխադրում և պահեստավորում: Այս քայլում ընկերությունների ծախսերի յուրաքանչյուր փարրը բաժանվում է նշված ֆունկցիոնալ փիրոյթների միջև (տես՝ հավելված NN 1 և 2):

3.2 Ծախսերի դասակարգումը

Ծախսերը դասակարգվում են հետևյալ խմբերում՝ հասարարում, փոփոխական, սպառողների սպասարկման:

Նասարարումը այն ծախսերն են, որոնք ընկերությունները կարարում են անկախ մարակարարված գազի ծավալից և սպառողների քանակից: Դրանք հիմնականում ընկերության հիմնական միջոցների սպասարկման և պահպանման հետ կապված ծախսերն են և այլ ծախսերը, որոնք պետք է հարուցվեն՝ անկախ մարակարարված գազի քանակից:

Փոփոխականը այն ծախսերն են, որոնք փոփոխվում են կախված մարակարարված գազի քանակից: Այդ ծախսերն ընդգրկում են մարակարարվող գազի արժեքը և գազի քանակի հետ կապված որոշ այլ ծախսեր (օրինակ՝ անհուսալի դեբիտորական պարտքերի դուրսգրման ծախսերը և այլն):

Սպառողների սպասարկման ծախսերն այն ծախսերն են, որոնք անմիջականորեն կապված են սպառողների սպասարկման հետ: Դրանք ընդգրկում են առևտրային հաշվիչների ցուցմունքները վերցնելու, հաշիվների ներկայացման, վճարների հավաքագրման, հաշվառման և այլ ծախսեր, ինչպես նաև հաշվիչների շահագործման հետ կապված ծախսերը:

Ծախսերի դասակարգումը բերված է NN 3 և 4 հավելվածներում:

3.3 Սպառողների դասակարգումը

Նամաձայն «Էներգետիկայի մասին» ՆՆ օրենքի՝ սակագների արբերակումը կարող է կարարվել ըստ պահանջվող հզորության, սպառման ծավալների, ժամանակի, միացման պայմանների: Տարբերակումն իրականացվում է սպառողներին ըստ խմբերի դասակարգմամբ: Յուրաքանչյուր սպառողական խումբ պետք է բաղկացած լինի միանման սպառման

բնութագրեր ունեցող սպառողներից, որոնց գազամատակարարումը և սպասարկումը մոտավորապես նման գնային բեռնվածք է ստեղծում համակարգի համար:

Սպառողների դասակարգման ժամանակ բացի Կենտրոնական ցուցանիշներից կարող են հաշվի առնվել նաև փնտրման ցուցանիշները, ինչպես, օրինակ, ծառայության արժեքավորությունը, գների ճկունությունը, այլընտրանքի գոյությունը, ծառայության մրցունակությունը:

Ելնելով վերը նշվածից՝ առաջարկվում է սպառողների հետևյալ դասակարգումը.

1. Բնակչություն (կենցաղային սպառողներ): Այս խմբում ընդգրկվում են այն սպառողները, որոնք բնական գազն օգտագործում են կենցաղային կարիքների համար:
2. Ընդհանուր առևտրային սպառողներ: Այստեղ ընդգրկվում են այն բոլոր սպառողները, որոնք բնական գազն օգտագործում են ոչ կենցաղային նպատակների համար և չեն մտնում հաջորդ չորս խմբերի մեջ:
3. Սեղմված բնական գազի մատակարարներ: Այստեղ ընդգրկվում են փրանսպորտային միջոցներին սեղմված գազ մատակարարող սպառողները:
4. Ջերմային էլեկտրակայաններ:
5. Ջերմամատակարարում: Այստեղ ընդգրկվում են այն կաթսայատները, որոնք ջերմային էներգիա են արտադրում վաճառքի համար:
6. Խոշոր արդյունաբերական սպառողներ:

Վերը նշված սպառողական խմբերը վերաբերում են միայն բաշխում իրականացնող «Նայֆուսգազարդ» ՓԲԸ-ին:

Սպառողների դասակարգումը և սպառողական խմբերի կազմը ընկերության ներկայացմամբ հաստատվում է հանձնաժողովը:

«Տրանսգազ» ՍՊԸ-ի համար սպառողներ են հանդիսանում բաշխող ընկերությունը և այն սպառողները, որոնք գազ են ներկրում սեփական կարիքների համար և օգտվում են փոխադրման և պահեստավորման ծառայություններից:

3.4 Ծախսերի բաշխումը

Վերլուծության հաջորդ փուլում դասակարգված ծախսերը բաշխվում են սպառողական խմբերի միջև: Այդ բաշխումն իրականացվում է բաշխման գործակիցների միջոցով, որոնք պետք է որոշվեն այնպես, որ հնարավորինս ճշգրիտ արտահայտեն սպառողական խմբերի կողմից ծախսերի առաջացման պատճառները:

Նաստարարուն ծախսերի բաշխումն իրականացվում է առանձին սպառողական խմբերի սեփական գազաթնային սպառման մեծությանը համամասնաբար, անկախ նրանից, թե երբ է

տեղի ունենում այդպիսի սպառումը: Բաշխման այս եղանակն անվանում են չհամընկնող գազաթնային սպառման վրա հիմնված, ի փարբերություն համընկնող գազաթնային սպառման վրա հիմնված եղանակի, երբ բաշխումն իրականացվում է համակարգի առավելագույն սպառման պահին առանձին սպառողական խմբերի սպառմանը համամասնաբար:

Բաշխման գործակիցները որոշվում են հետևյալ բանաձևով՝

$$K_{N_i} = \frac{N_i}{\sum_i N_i},$$

որպեղ՝

K_{N_i} - հասարարուն ծախսերի i -րդ սպառողական խմբի բաշխման գործակիցն է,

N_i - i -րդ սպառողական խմբի առավելագույն օրական սպառումն է:

Փոփոխական ծախսերի բաշխումն իրականացվում է սպառողական խմբերի փարեկան սպառման մեծությանը համամասնաբար:

$$K_{V_i} = \frac{V_i}{\sum_i V_i},$$

որպեղ՝

K_{V_i} - փոփոխական ծախսերի i -րդ սպառողական խմբի բաշխման գործակիցն է,

V_i - i -րդ սպառողական խմբի փարեկան սպառումն է:

Սպառողների սպասարկման ծախսերի բաշխումն իրականացվում է սպառողական խմբերում «բերված» սպառողների քանակին համամասնաբար: Նկարի ունենալով, որ փարբեր սպառողական խմբերում ընդգրկված սպառողների սպասարկումը փարբեր ծախսեր են առաջացնում ընկերությունում և որպես միավոր ընդունելով մեկ բնակիչ սպառողը, մնացած խմբերի սպառողների համար կիրառվում են «բերման» գործակիցներ, որոնք այս կամ այն ճշտությամբ արփացողում են այդ փարբերությունները:

Նաշվի առնելով նշվածը՝ սպառողների սպասարկման ծախսերի բաշխման գործակիցները որոշվում են հետևյալ բանաձևով՝

$$K_{n_i} = \frac{a_i n_i}{\sum_i a_i n_i},$$

որպեղ՝

n_i - i -րդ սպառողական խմբի բաժանորդների քանակն է,

a_i - i -րդ սպառողական խմբի մեկ բաժանորդի բնակիչ բաժանորդին բերման գործակիցն է, որը ցույց է տալիս, թե ավելի խմբի մեկ բաժանորդի միջինացված սպասարկման ծախսերը մոտավորապես քանի բնակիչ բաժանորդի սպասարկման ծախսերին են համարժեք:

Դասակարգված ծախսերի բաշխումը կարարվում է որոշված բաշխման գործակիցների հիման վրա հետևյալ բանաձևերով՝

$$\sigma_{Ni} = K_{Ni} * \sigma_N,$$

$$\sigma_{Vi} = K_{Vi} * \sigma_V,$$

$$\sigma_{ni} = K_{ni} * \sigma_n,$$

որտեղ՝

σ_N , σ_V , σ_n - համապարասխանաբար համակարգի հաստատուն, փոփոխական և սպառողների սպասարկման ծախսերն են,

σ_{Ni} , σ_{Vi} , σ_{ni} - i -րդ սպառողական խմբի կողմից հատուցվող համապարասխան ծախսերի մասնաբաժինն է:

4. Գազամատակարարման համակարգի սակագների ձևերի և կառուցվածքի ընտրությունը, դրանց հաշվարկը

4.1 Փոխադրման սակագին

Փոխադրման սակագինը սահմանվում է «Տրանսգազ» ՍՊԸ-ի կողմից գազի փոխադրման և պահեստավորման ծառայությունների համար: Ընկերությունը ծառայություններ է մատուցում «ՆայՌուսգազարդ» ՓԲԸ-ին՝ փոխադրելով նրա կողմից ներկրված գազը սահմանից մինչև բաշխողի հետ սահմանագազարման կետերը: Նույն ծառայությունները կմատուցվեն նաև այլ լիցենզավորված անձանց, որոնք գազ են ներկրում սեփական կարիքների կամ արտահանման համար:

Փոխադրման համակարգի շահագործման համար անհրաժեշտ ծախսերը գծային կոմպրեսորային կայանների բացակայության պայմաններում կախված չեն փոխադրվող գազի քանակից և դիտարկվում են որպես հաստատուն՝ հզորության ծախսեր: Գազի պահեստավորման հետ կապված ծախսերի մի մասը կարելի է ընդունել ուղիղ համեմատական պահեստավորված գազի քանակին (օրինակ, կոմպրեսորների աշխատանքի համար ծախսված գազի արժեքը կամ պահեստավորված գազի հետ կապված ֆինանսական ծախսերը), սակայն, քանի որ փոխադրող ընկերությունը գազի սեփականատեր չէ, այդ ծախսերը հատուցվում են

գազի սեփականատերերի ծախսերից և չեն ընդգրկվում փոխադրող ընկերության անհրաժեշտ հասույթում:

Քազի փոխադրման սակագինը միադրույք սակագին է, որի համար ծառայության չափման միավորը կարող է լինել՝

ա) փրանսպորտային համակարգի թողունակության սահմանափակումների պայմաններում ամենաձանրաբեռնված ամսվա առավելագույն օրական սպառումը (հազ.լիմ/օր),

բ) փրանսպորտային համակարգի թողունակության սահմանափակումների բացակայության դեպքում փոխադրված գազի քանակի միավորը (հազ.լիմ)

Առաջին դեպքում (ա) փոխադրման սակագինը կորոշվի հետևյալ բանաձևով

$$U_{\text{գ}} = \frac{U_{\text{գ}}}{12 \sum_i Q_{i \max}} (\text{դրամ/ամիս.հազ.լիմ/օր})$$

որտեղ՝ $Q_{i \max}$ -ը գազի փոխադրման i - րդ պարվիրատուի ամենաձանրաբեռնված ամսվա առավելագույն օրական սպառումն է (հազ.լիմ/օր)

Քազի փոխադրման պարվիրատուների ամսական վճարները հանդիսանում են հասարակագրված մեծություններ են, որոնք հավասար են՝

$$U_{\text{գ}} = U_{\text{գ}} * Q_{i \max}$$

և անկախ են րվյալ ամսում փոխադրված գազի ծավալից:

Քազի առավելագույն օրական սպառումը որոշվում է պարվիրատուի հաշվիչի միջոցով նախօրոք կարարված չափումների հիման վրա: Եթե այդպիսի չափումներ չեն իրականացվել, ապա այն կարող է որոշվել ձմեռային ամենաձանրաբեռնված ամսվա սպառումը բաժանելով ամսվա օրերի թվի վրա: Եթե այդպիսի րվյալներ նույնպես չկան, ապա առավելագույն սպառումը կարող է որոշվել սպառումը սահմանափակող սարքերի թողունակությամբ:

Երկրորդ դեպքում (բ) փոխադրման սակագինը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$U_{\text{գ}} = \frac{U_{\text{գ}}}{\sum_i V_{\text{գ}}^{\text{գ}}} (\text{դրամ/հազ.լիմ})$$

որպես՝

$V_{\eta i}^{w\eta}$ -i-րդ լիցենզավորված անձի համար փարվա ընթացքում փոխադրված գազի քանակն է (հազ.խմ)՝ չափված փրանսպորտային համակարգից պարվիրատուին կամ բաշխողին հանձնելու կետերում:

Գազի փոխադրման ամսական վճարը կկազմի

$$ԱՎ_{\eta i} = U_{\eta} * V_{\eta i}^{w\eta},$$

որպես $V_{\eta i}^{w\eta}$ - փվյալ ամսվա ընթացքում i-րդ պարվիրատուի համար փոխադրված գազի քանակն է, որը որոշվում է հաշվիչների ցուցմունքով, եթե գազի հանձնումը փիրոջը իրականացվում է անմիջականորեն փրանսպորտային համակարգից և հերևյալ բանաձևով

$$V_{\eta i}^{w\eta} = \frac{V_{\eta i}^{w\eta}}{1 - \frac{a_p}{100}},$$

եթե հանձնումը իրականացվում է բաշխման համակարգի միջոցով: Այսպես a_p -ն բաշխման համակարգում գազի կորուստներն են՝ փոկոսներով բաշխման համակարգ մուտք գործած գազի նկարմամբ:

4.2 Բաշխման սակագին

Բաշխման սակագները կիրառվում են այն լիցենզավորված անձանց (պարվիրատու) համար, որոնք գազ են ներկրում սեփական սպառման կամ արտահանման համար (երբ գազն անցնում է նաև բաշխման համակարգով):

Գազի բաշխման սակագինը միադրույք սակագին է, որի համար ծառայության չափման միավորը կարող է լինել՝

- ա) բաշխման համակարգի թողունակության սահմանափակումների պայմաններում ամենաձանրաբեռնված ամսվա օրական առավելագույն սպառումը (հազ.խմօր),
 - բ) բաշխման համակարգի թողունակության սահմանափակումների բացակայության դեպքում բաշխման համակարգով փոխադրված գազի քանակի միավորը (հազ.խմ)
- Առաջին դեպքում (ա) բաշխման սակագինը որոշվում է հերևյալ բանաձևով՝

$$U_p = \frac{Q_{i \max}}{12 \sum_i Q_{i \max}} \text{ (դրամ/ամիս.հազ.խմ/օր)}$$

որտեղ՝ $Q_{i \max}$ - գազի բաշխման համակարգով փոխադրման i - րդ պարվիրատուի ամենամեծ արժեքով ամսվա օրական առավելագույն սպառումն է (հազ.խմ/օր)
 Ամսական վճարները հաստատված մեծություններ են, որոնք հավասար են

$$U_{pi} = U_p * Q_{i \max}$$

և անկախ են արվյալ ամսում բաշխման համակարգով փոխադրված գազի ծավալից:

Գազի օրական առավելագույն սպառումը որոշվում է պարվիրատուի հաշվիչի միջոցով նախօրոք կատարված չափումների հիման վրա: Եթե այդպիսի չափումներ չեն իրականացվել, ապա այն կարող է որոշվել ձեռնային ամենամեծ արժեքով ամսվա սպառումը բաժանելով ամսվա օրերի թվի վրա: Եթե այդպիսի արվյալներ նույնպես չկան, ապա առավելագույն սպառումը կարող է որոշվել սպառումը սահմանափակող սարքերի թողունակությամբ:

Երկրորդ դեպքում (p) բաշխման սակագինը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$U_p = \frac{Q_p}{\sum_i V_{pi}^{qu}} \text{ (դրամ/հազ.խմ),}$$

որտեղ՝

V_{pi}^{qu} - i -րդ լիցենզավորված անձի համար տարվա ընթացքում բաշխման համակարգով փոխադրված գազի քանակն է (հազ.խմ)՝ չափված բաշխման համակարգից պարվիրատուին հանձնելու կետերում:

Գազի բաշխման ամսական վճարը կկազմի՝

$$U_{pi} = U_p * V_{pi}^{qu},$$

որտեղ V_{pi}^{qu} - արվյալ ամսվա ընթացքում i -րդ պարվիրատուի համար բաշխման համակարգով փոխադրված գազի քանակն է, որը որոշվում է հաշվիչների ցուցմունքով:

4.3 Կարգավարման սակագներ

Կարգավարման սակագները կիրառվում են այն լիցենզավորված անձանց համար, որոնք գազ են ներկրում սեփական սպառման կամ արտահանման համար:

Կարգավարման սակագինը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$U_{ij} = \frac{ԱՆ_{ij}}{\sum_i V_{ii}^{սպռ}},$$

որտեղ՝

ԱՆ_{ij}- «Նայֆուսգազարդ» ՓԲԸ-ի անհրաժեշտ հասույթում կարգավարական ծառայության մասնաբաժինն է, որի համար պետք է իրականացվի առանձնացված հաշվառում,

$\sum_i V_{ii}^{սպռ}$ - փարբեր լիցենզավորված անձանց, այդ թվում՝ «Նայֆուսգազարդ» ՓԲԸ-ի

կողմից փարվա ընթացքում ներկրված գազի քանակն է:

Կարգավարման ծառայության համար ներկրողները վճարում են «Նայֆուսգազարդ» ՓԲԸ-ին, որի կազմում է կարգավարման ծառայությունը: Ամսական վճարի չափը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$ԱՎ_{ij} = \frac{U_{ij} * V_i^{սնս}}{\left(1 - \frac{a_{ս}}{100}\right) * \left(1 - \frac{a_{բ}}{100}\right)},$$

որտեղ՝

$V_i^{սնս}$ -ը լիցենզավորված անձի կողմից սահմանազարման կետերում փոխալ ամսում ընդունված գազի քանակն է,

$a_{ս}$ -ն և $a_{բ}$ -ն փոխադրման և բաշխման համակարգերում գազի կորուստներն են փոկոսներով, համապատասխան համակարգ մուտք գործած գազի քանակից:

Եթե լիցենզավորված անձին պարկանող գազը մուտք չի գործում բաշխման համակարգ, ապա $a_{բ}$ -ն ընդունվում է հավասար զրոյի:

4.4 Սպառողական խմբերի մանրաձախ սակագներ

Սպառողական խմբերի սակագների հաշվարկի հիմք են հանդիսանում բաշխող ընկերության («Նայֆուսգազարդ» ՓԲԸ-ի) դասակարգված և սպառողական խմբերի միջև բաշխված ծախսերը:

Սակագնային դրույքների հաշվարկները իրականացվում են միադրույք սակագնային համակարգում կամ երկդրույք սակագնային համակարգում: Բացի այդ, ընկերության կողմից կարող են առաջարկվել սակագնի կառուցվածքի և սակագնային դրույքի հաշվարկների այլ մոդեղումներ:

Մտորև բերված են նշված սպառողական խմբերի առաջարկվող սակագների կառուցվածքը և սակագնային դրույքների հաշվարկը:

Բոլոր սակագներում սահմանվում է ծառայությունների դրույքներից առանձնացված գնվող գազի գինը արտացոլող դրույք, որը կարող է փոփոխության ենթարկվել առանց սակագների փոփոխության ամբողջական հայտ ներկայացնելու՝ գնվող գազի արժեքի կամ դրամի փոխարժեքի փոփոխության դեպքում:

Գնվող գազի արժեքը արտացոլող սակագնային դրույքը ընդհանուր է բոլոր սպառողական խմբերի համար և հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$U\mathcal{F}_q = \frac{\bar{c}}{\left(1 - \frac{a_m}{100}\right)\left(1 - \frac{a_p}{100}\right)},$$

որտեղ՝ \bar{c} - հաշվարկային ժամանակահատվածում ներքին սպառման համար գնվող գազի միավորի միջին կշռության արժեքն է, որը հավասար է՝

$$\bar{c} = \frac{\sum_i c_i V_i}{\sum_i V_i}:$$

4.4.1 Բնակչություն (կենցաղային սպառողներ)

Բնակչության գազամատակարարման սակագները բաղկացած են հետևյալ բաղադրիչներից՝

ա) գազի արժեքի դրույք ($U\mathcal{F}_q$)՝ արտահայտված դր/խմ-ով,

բ) հասարակագրված ամսական բաժանորդային վճար, որն արտահայտվում է դր/բաժանորդ/ամիս-ով և որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$P\mathcal{F}_p = \frac{\mathcal{D}_{Np} + \mathcal{D}_{np}}{12 * n_p}$$

որպեղ՝

\mathcal{D}_{Np} և \mathcal{D}_{np} - բնակչության սպառողական խմբի հասարապրուն և սպառողների սպասարկման ծախսերի բաժնետմասերն են,

n_p - բնակիչ-բաժանորդների միջին փարեկան քանակն է:

Բնակիչ բաժանորդի ամսական վճարը կկազմի՝

$$\mathcal{A}\mathcal{J}_p = V_w * U\mathcal{R}_q + \mathcal{B}\mathcal{J}_p,$$

որպեղ V_w - ն գազի ամսական ծախսն է խմ-ով:

4.4.2 Ընդհանուր առևտրային սպառողներ

Այս խմբի սպառողների համար կիրառվում են սակագնային հետևյալ դրույքները՝

ա) գազի արժեքի դրույք

բ) գազի փոխադրման և բաշխման ծառայությունների դրույք՝ արտահայտված դր/խմ-ով, որը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$U\mathcal{R}_{N_{n_w}} = \frac{\mathcal{D}_{N_{n_w}}}{V_{n_w}^m},$$

որպեղ՝

$\mathcal{D}_{N_{n_w}}$ - ընդհանուր առևտրային սպառողների խմբի համակարգի հասարապրուն ծախսերի բաժնետմասն է,

$V_{n_w}^m$ - ընդհանուր առևտրային սպառողական խմբի գազի փարեկան ծախսն է.

գ) Նասարապագրված ամսական բաժանորդային վճարից, որն արտահայտվում է դր/բաժանորդ/ամիս-ով և որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\mathcal{B}\mathcal{J}_{n_w} = \frac{\mathcal{D}_{n_w}}{n_{n_w}},$$

որպեղ՝

\mathcal{D}_{n_w} - ընդհանուր առևտրային սպառողական խմբի սպառողների սպասարկման ծախսերի բաժնետմասն է,

n_{n_w} - խմբի բաժանորդների քանակն է:

Այս խմբի բաժանորդի ամսական վճարը կորոշվի հետևյալ բանաձևով՝

$$\mathcal{A}\mathcal{J}_{n_w} = V_w(U\mathcal{R}_q + U\mathcal{R}_{N_{n_w}}) + \mathcal{B}\mathcal{J}_{n_w}:$$

4.4.3 Սերմնված գազի մատակարարներ և կենդրոնացված ջերմության ընկերություններ

Այս խմբերի սակագների կառուցվածքը նույնն է, ինչ նախորդ խմբինը, իսկ սակագնային դրույքները որոշվում են՝ օգտագործելով խմբերի համապատասխան ծախսերի բաժնետմասերը, սպառման ծավալները և բաժանորդների քանակը:

4.4.4 Ջերմային էլեկտրակայաններ

Ջերմային էլեկտրակայանների համար կիրառվում են հետևյալ սակագնային դրույքները՝ ա) գազի օրական առավելագույն սպառման համար ամսական հաստատագրված վճար (դր/ամիս/[հազ.լիտ/օր]), որը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$U\Gamma_N = \frac{\sigma_{N\varphi_l} + \sigma_{n\varphi_l}}{12Q_{\varphi_l \max}},$$

որտեղ՝

$\sigma_{N\varphi_l}$ և $\sigma_{n\varphi_l}$ - ջերմային կայաններ խմբի հաստատում և սպառողների սպասարկման ծախսերի բաժնետմասերն են,

$Q_{\varphi_l \max}$ - խմբի ընկերությունների օրական առավելագույն սպառումն է (հազ.լիտ/օր):

Ամսական վճարը կորոշվի հետևյալ բանաձևով՝

$$ԱՎ_{\varphi_l} = V_{\varphi_l} * U\Gamma_q + Q_{\varphi_l} * U\Gamma_N,$$

որտեղ՝ V_{φ_l} – փվյալ ջերմային էլեկտրակայանի ամսական գազի ծախսն է (հազ.լիտ),

Q_{φ_l} – փվյալ ջերմային կայանի օրական առավելագույն սպառումն է հաշվարկային փարվա ընթացքում:

4.4.5 Խոշոր արդյունաբերական սպառողներ

Այս խմբի սակագների կառուցվածքը նույնն է, ինչ ջերմային էլեկտրակայանների համար, իսկ սակագնային դրույքները որոշվում են նույն բանաձևերով՝ օգտագործելով այս խմբին վերագրված ծախսերի մասնաբաժինները և գազի օրական առավելագույն սպառման մեծությունները:

Առաջարկվող սակագների կառուցվածքը կարող է ներդրվել փուլերով՝ կախված անհրաժեշտ փոփոխությունների անկախությունից:

**Շահագործման և պահպանման ծախսերի
ֆունկցիոնալացում
«ՆայՌ-ուսագարդ» ՓԲԸ**

	Ծախսերի տեսակները	Ընդամենը ծախսեր	այդ թվում		
			ներկրում	կարգավարում	բաշխում
1	Նյութական ծախսեր				
2	Կապալառու կազմակերպությունների կողմից իրականացվող նորոգումների ծախսեր				
3	Ախտորոշիչ հետազոտում				
4	Հաշվարկներ աշխատակազմի հետ (աշխատավարձ)				
5	Հատկացումներ սոց. հիմնադրամին				
6	Այլ ծախսեր` այդ թվում				
6.1	վառելիքի ծախս				
6.2	ավտոտրանսպորտի սպասարկում				
6.3	էլեկտրաէներգիա				
6.4	կապի ծառայություն				
6.5	աուդիտ				
6.6	զազի համակարգի մասնագիտական կադրերի պատրաստում				
6.7	ապահովագրության վճար				
6.8	գումարների հավաքագրման ծառայություն				
6.9	ԷՊԿ սպասարկում				
6.10	Փաստացի կորուստների հաշվարկում				
6.11	վարձավճար				
6.12	կոմունալ ծախսեր				
6.13	գործուղման ծախսեր				
6.14	նեկայացուցչական ծախսեր				
6.15	բանկային ծառայություն				
6.16	մաքսավճար				
6.17	արժույթի փոխարկման ծախս				
6.18	այլ ծախսեր				
7	Ընդամենը ծախսեր				

**Շահագործման և պահպանման ծախսերի
ֆունկցիոնալացում
«Տրանսգազ» ՓԲԸ**

	Ծախսերի տեսակները	Ընդամենը ծախսեր	այդ թվում	
			տեղափոխում	պահեստավորում
1	Նյութական ծախսեր			
2	Կապալառու կազմակերպությունների կողմից իրականացվող նորոգումների ծախսեր			
3	Ախտորոշիչ հետազոտում			
4	Հաշվարկներ աշխատակազմի հետ (աշխատավարձ)			
5	Հատկացումներ սոց. հիմնադրամին			
6	Այլ ծախսեր՝ այդ թվում			
6.1	վառելիքի ծախս			
6.2	ավտոտրանսպորտի սպասարկում			
6.3	էլեկտրաէներգիա			
6.4	կապի ծառայություն			
6.5	աուդիտ			
6.6	գազի համակարգի մասնագիտական կադրերի պատրաստում			
6.7	ԷՊԿ սպասարկում			
6.8	վարձավճար			
6.9	կոմունալ ծախսեր			
6.10	գործուղման ծախսեր			
6.11	ներկայացուցչական ծախսեր			
6.12	այլ ծախսեր			
7	Ընդամենը ծախսեր			

**Շահագործման և պահպանման
ծախսերի դասակարգում
«ՆայՌ-ուսգագարդ» ՓԲԸ**

	Ծախսերի տեսակները	Ընդամենը ծախսեր	այդ թվում		
			փոփոխական ծախսեր	հաստատուն (հզորություն)	սպառողների սպասարկում
1	Ներկրում				
2	Բաշխում				
3	Կարգավարում				
4	Մաշվածություն				
5	Շահույթ				
6	Ընդամենը ծախսեր				

Նավելված N 4

**Շահագործման և պահպանման
ծախսերի դասակարգում
«Տրանսգազ» ՍՊԸ**

	Ծախսերի տեսակները	Ընդամենը ծախսեր	այդ թվում	
			փոփոխական ծախսեր	հաստատուն (հզորություն)
1	Տեղափոխում			
2	Պահեստավորում			
3	Մաշվածություն			
4	Շահույթ			
5	Ընդամենը ծախսեր			
6	Ընդամենը ծախսեր			